ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1963 Общественные науки

Հ. Ս. Մելիքյան

ՀԱՂՊԱՏԻ ԼԵՆԻՆՅԱՆ-ԻՍԿՐԱՅԱԿԱՆ, ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(60-ամյակի առթիվ)

Լրացավ անդրկովկասյան բոլշևիկյան հնագույն կազմակերպություններից մեկի, իսկ Հայաստանում առաջին կազմակերպության՝ Հաղպատի լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմակերպության հիմնադրման 60 տարին։

Հաղպատի կազմակերպության ստեղծման ու գործունեության պատմությունը առավել ուշագրավ ու հետաքրքիր է դառնում նրանով, որ նրա հիմնադրումը համընկնում է լենինյան պարտիայի հիմնադրման 60-ամյակի, ՌՍԴՐՊ 2-րդ համագումարի ժամանակաշրջանի հետ։

Ակնհայտ է, որ Հաղպատի կազմակերպության ստեղծման ու հատկապես նրա վաղ շրջանի գործունեության հետագա օբյեկտիվ ուսումնասիրությունը վերին աստիճանի կարևոր է դառնում Հայաստանի կոմպարտիայի և անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների գիտական-ամբողջական պատմության ստեղծման ճանապարհին։

Բանն այն է, որ առանց որևէ լուրջ պատճառի, անգամ միևնույն հիմնական փաստերի առկայության պայմաններում, բացակայում է միասնական կարծիքը այս կամ այն փաստի, այս կամ այն եզրակացության վերաբերյալ։ Ոմանց մոտ սխալ է նշվում Հաղպատի կազմակերպության հիմնադրման ժամկետը։ Թերի, տենդենցիոզ կերպով են մեկնաբանվում կազմակերպության հիմնադիրների, առաջին կազմի, հեղափոխական շարժման և այլ հարցեր։

Ներկա հոդվածում նպատակ ենք դնում, հենվելով արխիվային, ինչպես նաև հրապարակում եղած փաստերի վրա, տալ Հաղպատի կազմակերպության ստեղծման ու ամրապնդման քիչ թե շատ ամբողջական պատմությունը։ Որոշ իմաստով ներկա հոդվածը հետապնդում է նաև հեղինակի՝ Լոռու մարքսիստական կազմակերպություններին և հեղափոխական շարժմանը վերաբերող աշխատության[1] մի քանի դրույթների հետագա լրացումը, նոր փաստերի օգնությամբ Հաղպատի կազմակերպության ստեղծման ու ամրապնդման պատմության առաջին շրջանի լուսաբանումը։

Եղած փաստերը, նրանց համեմատական վերլուծությունը անառարկելի են դարձնում, որ Հաղպատի լենինյան-իսկրայական կազմակերպությունը ստեղծվել է 1903 թ. հունիսին, գյուղացիական մայիսյան ելույթից 1—2 շաբաթ հետո։

Լոռին անդրկովկասյան հեղափոխական շարժման այն օջախներից էր, ուր համեմատաբար վաղ սկսեց հասունանալ աշխատավոր զանգվածների հե-

---

[1] *Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռեոլյուցիոն շարժումները Լոռում (1899—1908 թթ.), Երևան, 1957։*

ղափոխական գիտակցությունը։ Բանվորական կենտրոններին մոտ լինելը, մասնավորապես Թիֆլիսի հետ ունեցած մշտական սերտ կապը, երկաթուղու առկայությունը, Ալավերդու պղնձարդյունաբերության զարգացումը և դրա հետ մեկտեղ Լոռվա բուն կենտրոնում բանվորական շարժման հասունացումը, կալվածատիրական հողատիրության առկայությունն ու ճորտատիրության առավել շեշտված մնացուկների գոյությունը այն գործոններն էին, որոնք նպաստավոր հող ստեղծեցին բարձրացող համառուսաստանյան հեղափոխական շարժման մեջ Լոռու աշխատավորների ներգրավման համար։

Դեռևս 1899 թվականին ստեղծվեց Ջալալօղլու (այժմ Ստեփանավան) մարքսիստական խմբակը, որը երիտասարդ Ստ. Շահումյանի պայծառ մտքի ու հեղափոխական ջերմ կրքի շնորհիվ ղգալի դեր խաղաց մարքսիզմը Լոռում և Հայաստանում տարածելու գործում։ Համառուսաստանյան ու անդրկովկասյան առնականացող հեղափոխական շարժման բարերար մթնոլորտում Շահումյանի խմբակի գոյությունն իսկ չէր կարող լուրջ դեր չխաղալ Լոռում հեղափոխական տրամադրությունների ձևավորման ու հասունացման գործում։

Հաղպատի կազմակերպության հիմնադրման 60-ամյակի տոնակատարության այս օրերին ոմանց մոտ, թերևս ոչ անհիմն, ծնվում է այն տարակուսանքը, թե Հաղպատի կազմակերպության դերի առանձնահատուկ նշումը, այդ կազմակերպությունը անվերապահորեն Հայաստանում առաջին պարտիական կազմակերպություն համարելը, չի՞ նվազեցնում արդյոք Ջալալօղլու մարքսիստական խմբակի դերը, ստվեր չի՞ գցում արդյոք նրա վրա։ Չէ՞ որ արդեն ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ պատմական գրականության մեջ իր հաստատ տեղն է գտել այն միտքը, որ Ջալալօղլու Շահումյանի ստեղծած մարքսիստական խմբակը Հայաստանում առաջինն է։ Նման տարակուսանքի պատճառը, մեր կարծիքով, պետք է տեսնել նրանում, որ մինչև այժմ ոմանց մոտ դեռևս որոշակի, պարզ բաժանում չի դրվում «մարքսիստական խմբակ» և «պարտիական կազմակերպություն» հասկացությունների միջև, որ գրականության մեջ հաճախ այդ հասկացությունները շփոթվում են, գանկացած պահին «խմբակը» «կազմակերպություն» է կոչվում կամ ընդհակառակը։ Նման քմահաճ մոտեցումը, որն, անկասկած, վնասել է ու շարունակում է վնասել հեղափոխական շարժումների պատմության մեկնաբանման գիտական լրջությանը, թերևս այդ բանի գլխավոր պատճառն է։ Բանն այն է, որ մարքսիստական, լենինյան-իսկրայական խմբակները, որոնք դարավերջին և 20-րդ դարի սկզբին, ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի նախապատրաստման ժամանակաշրջանում առաջ էին գալիս Անդրկովկասում ու Հայաստանում, հիմնականում ծառայում էին մարքսիզմի տարածման գործին, իրենց առաջ իբրև գլխավոր նպատակ, դնում էին խմբակի անդամների գաղափարական-քաղաքական հասունացումը, դրանով իսկ նախապատրաստում էին ծրագրային ու կանոնադրական որոշակի սկզբունքների առկայության պայմաններում, այդ խմբակի բազայի վրա պարտիական սկզբնական կազմակերպության ստեղծումը։ Այդ բանը չէր բացառում, իհարկե, նաև այն, որ խմբակը ուժերի ներածին չափով հեղափոխական, կազմակերպչական աշխատանքներ մասսաների մեջ, այս կամ այն չափով իրագործելով սկզբնական կազմակերպության ֆունկցիաները։ Ինչ վերաբերում է պարտիական կազմակերպությանը, ապա արդեն հասկանալի է, որ նա ձևակերպվում ու կազմակերպչորեն ճանաչվում է իբրև մարքսիստական գրականությանը քիչ թե շատ ծա-

նոթ անդամների կուռ կազմակերպություն, որը մինչև պարտիայի 2-րդ համագումարը ղեկավարվում էր լենինյան «Իսկրա»-ի մշակած գաղափարական ու կազմակերպչական սկզբունքներով, իսկ պարտիայի 2-րդ համագումարից հետո ընդունված ծրագրով ու կանոնադրությամբ, պարտիայի վերաբերյալ լենինյան ուսմունքով։ Հայտնի է նաև, որ մինչև ՌՍԴԲՊ կովկասյան միության ստեղծումը, Անդրկովկասում գործում էին լենինյան-իսկրայական ուղղության խմբակներ։ Ճիշտ է գրում Ա. Կախոյանը, որ այն ժամանակ «կուսակցության մեջ բջջային սիստեմը (սկզբնական կազմակերպությունների—Հ. Մ.) դեռ գոյություն չուներ»[2]։ Սկզբնական պարտիական կազմակերպությունները ենթարկվում էին Բաքվի, Թիֆլիսի, Բաթումիի կոմիտեներին։

Ջալալօղլու մարքսիստական խմբակի գործունեությունը հիմնականում կապված էր Շահումյանի հետ, նրա՝ գրեթե ամեն ամառ Ջալալօղլի գալու հետ։ Մնացած ժամանակ խմբակում ուժերը չէին բավարարում, հետևաբար և խմբակը նախկին թափով ու գաղափարական մակարդակով չէր կարող շարունակել իր գործունեությունը։ Այդպիսի, եթե կարելի է ասել, ընդհատվածությանը ավելացավ նաև այն, որ Շահումյանի արտասահման՝ ուսման մեկնելու կապակցությամբ խմբակի աշխատանքները նկատելիորեն թուլացան։ Դրանով էլ հիմնականում պետք է բացատրել այն փաստը, որ Ջալալօղլու մարքսիստական խմբակի վերաճումը կազմակերպության ձգձգվեց ավելի տևական ժամանակով, մինչև որ Հաղպատում, ավելի նպաստավոր պայմաններում, կստեղծվեր Հայաստանում առաջին պարտիական կազմակերպությունը։

Այսպիսով, չի կարող այլ կարծիք լինել, բացի նրանից, որ Ջալալօղլու՝ Շահումյանի ստեղծած ու ղեկավարած մարքսիստական խմբակը եղել ու մնում է Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը։

Որո՞նք էին այն օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները, որոնք նպաստեցին 1903 թվականի ամռանը Հաղպատում լենինյան-իսկրայական կազմակերպության ստեղծմանը։

Ամենից առաջ չի կարող ուշադրություն չգրավել Հաղպատի գյուղացիության որությունը, նրա տնտեսական, իրավական ու հոգևոր թշվառությունը, որը ընդհանրապես տիպական լինելով այն ժամանակի անդրկովկասյան գյուղի համար, միաժամանակ և աչքի էր ընկնում ինչ-որ չափի բացառիկությամբ։ Ժամանակակիցները արդարացիորեն գրում էին, որ «Լոռվա գյուղերից ամենատանջվածն ու հալածվածը եղել է Հաղպատը»[3]։ Հաղպատը Լոռու հինգ կալվածատիրական գյուղերից ամենից ավելի աչքի ընկնող գյուղն էր։ Նրա հողային ամբողջ տարածությունները (վարելահող, խոտհարք, արոտավայր, անտառ, այգի) կազմում էր 9650 դեսյատին, որից 8500-ը իշխան Դավիթ (գյուղացիների շրջանում հայտնի էր Ջալիկո—Հ. Մ.) Բարաթովի կալվածքն էր։ Մնացած մոտ 1150 դեսյատինից 500-ը պատկանում էր Հաղպատի վանքին՝ գյուղացիների վզին նստած երկրորդ կալվածատիրոջը։ Գյուղի փոքրաթիվ կուլակները ունեին 150 դեսյատին հող։ Մնացած 500 դեսյատինը բաժին էր ընկնում ժամանակավոր-պարտապան գյուղացիներին, նրանց, ովքեր տխրահռչակ «աղատագրումից», 1864 թվականին Թիֆլիսի նահանգում տեղի

---

2 Ա. Կ ա խ ո յ ա ն, Հոդվածներ և հուշեր, Հայպետհրատ, 1963, էջ 184։

3 Նույն տեղում։

ունեցած գյուղացիական ռեֆորմից հետո օգտվելով փոքրիկ հողակտորից, պետք է ետ գնեին այդ հողը և դառնային սեփականատեր-գյուղացի։ Ցարական-կալվածատիրական դիկտատուրայի պայմաններում «կամավոր» ճանաչված ետ գնման սկզբունքը, կալվածատիրոջ կողմից ստեղծված նյութական և այլ արգելքների պատճառով, հասցրեց այն բանին, որ գյուղացիները այդպես էլ, մինչև Լոռում սովետական կարգերի հաստատումը, չէին կարողանում ազատագրվել ժամանակավոր-պարտապանի վիճակից։ Հաղպատի 8—10 և ավելի շունչ ունեցող յուրաքանչյուր ժամանակավոր-պարտապան ճանաչված տնտեսություն օգտվում էր 2.6 դեսյատին հողից, որից միայն մեկ դեսյատինն էր վարելահող, այն էլ եղած հողատարածություններից ամենից ավելի անբերրի, քարքարոտ, դժվար մշակելի հող։ Հատկանշական է, որ գյուղացիների օգտագործած 500 դեսյատին հողը չէր բավարարում գյուղացիական տնտեսությունների $^1/_4$-ի մինիմալ պահանջները։ Գյուղում զգալի թիվ էին կազմում խիզան գյուղացիները, որոնք ամբողջովին զուրկ էին հողից։ Նման դրությունը գյուղացիությանը փաստական ճորտական կախման մեջ էր պահում կալվածատիրոջից, ինչպես նաև վանքից։ Նոր ժամանակներում ավելացավ նաև կուլակային ճնշումը, որը ամենօրյա էր, դաժան, անմարդկային։ Իր և բազմանդամ ընտանիքի գոյությունը մի կերպ քարշ տալու համար Հաղպատի գյուղացին ստիպված վարձակալում էր կալվածատիրական հողը, որի դիմաց նա պարտավոր էր իշխան Բարաթովին վճարել բերքի $^1/_3$-ը, խոտի բահրա, արոտավարձ, գյուղատնտեսական մթերքներ, այգուց ստացած եկամտի կեսը, հարկ Դերետի վրայից անցնող խարխուլ կամուրջի համար և այլն։ Նրանը պարտավոր էին անտառից փայտ բերել կալվածատիրոջ համար, հոգ տանել նրա կալվածքների կառավարչի նկատմամբ, պահել գյուղացիներին մշտական սարսափի մեջ պահող կալվածատիրական ստրաժնիկներին ու անտառապահներին, վանքին տալ կալօրհնեք, տնօրհնեք, ջրօրհնեք... Գյուղացիները պարտավոր էին իրենց սուղ միջոցներով պահել այն բազմաթիվ պաշտոնյաներին, որոնք գալիս էին Հաղպատ։ Գյուղական աշխատանքների ամենաեռուն շրջանում, երբ վտանգի տակ էր կիսաքաղց ընտանիքի երազած բերքը, կալվածատերը ստիպում էր գյուղացիներին աշխատել իր համար։ «Գնա, կրակ ա, չգնա, լոց ա, ի՞նչ անի։ Երկու հրի մեջ է մնացել,—գրում էր «Արձագանք»-ը։—Ո՞ւմ գանգատվի, ի՞նչպես գանգատվի, երկրագործությամբ պարապելուց ավել ոչինչ չգիտե...»[4] Դա փաստորեն նախառեֆորմյան շրջանի աշխատավճար ռենտան էր՝ կոր, որը այնպես ամուր դեռ պահպանվում էր Հաղպատում և Լոռում։ Կարծես ոչինչ չէր փոխվել ճորտատիրական ժամանակներից։

Այսպիսով, կալվածատեր Բարաթովից սկսած մինչև ցարական վերջին չինովնիկը թալանում էին Հաղպատի գյուղացիներին։

Տնտեսական այդպիսի թշվառություններ մշտապես ուղեկցում էր թանձր խավարը, տգիտությունը, Մարքսի նկարագրած «գյուղական իդիոտիզմը»։ Հաղպատ գյուղի այն ժամանակվա անդուդական նկարագիրն է տվել հայ ռեալիստական դրականության մեծ վարպետը՝ Շիրվանզադեն, «Լոռվա ձորերում» դեղարվեստական ակնարկի մեջ։ «...Խոտից, փայտից և տեղ-տեղ խճից մի կերպ հորինած խղճուկ խրճիթների մի քանի շարք՝ դա է գյուղը։ Մանուկները

4 «Արձագանք», 1896 թ., № 72։

մերկանդամ, կանայք ոտաբոբիկ, տղամարդիկ ընկճված դառն աշխատանքի և աղքատության լծի ներքո, խեղճ, ողորմելի, միանդամայն ողորմելի արարածներ»[5]։ Համառոտ, բայց անդրկովկասյան գյուղի համապարփակ նկարագիրը հանդիսացող այդ տողերում մի անգամ ևս հաստատվում է լենինյան այն դիտողությունը, որ «ամբողջ ռեֆորմի դարաշրջանը» գյուղացուն թողեց աղքատ, ընկճված, խավար, կալվածատեր-ճորտատերին ենթարկված և՛ դատարանում, և՛ վարչության մեջ, և՛ դպրոցում...»[6]։

Համառոտակի այսպիսին էր Հաղպատի գյուղացիության դրությունը, որը նպաստավոր իրադրության մեջ չէր կարող «հազար ու մի ցավի տեր» գյուղացու կենաց և մահու պայքարի պատճառ չդառնալ։

Այդ պայքարին նպաստող երկրորդ պատճառը Հաղպատի գյուղացիների ունեցած սերտ կապն էր անդրկովկասյան արդյունաբերական շրջանների, մասնավորապես Ալավերդու հանքերի ու գործարանի, երկաթուղու, Թիֆլիսի ու Բաքումի հետ։

Հաղպատի գյուղացիների ավելի քան 2/3-ը չքավոր էին։ Նրանց մի մասը բոլորովին զուրկ էր հողից, իսկ մյուս մասն էլ, որ մի փոքր հողակտոր ուներ, զուրկ էր այն մշակելու միջոցներից։ Չկարողանալով տանել մի կողմից կալվածատիրական կամայականությունները, մյուս կողմից՝ գյուղական ցեցերի՝ կուլակի, քյոխվայի, տերտերի, վաշխառուի ամենօրյա կեղեքող ու ահաբեկող բռնությունը, պետական հարկահավաքների և բազմազան այլ չինովնիկների ու ոստիկանների կողմից աշխատավոր գյուղացիության թալանը, գյուղացիների ճնշող մեծամասնությունը աշխատանք է փնտրում Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում։ Բոլշևիկյան «Կայծ» թերթը անդրադառնալով Լոռու գյուղացիության դրության ու նրա քայքայման հարցերին, գրում էր. «Այս ամենից հետո յուրաքանչյուրը գալիս է այն եզրակացության, որ ավելի լավ է երկրագործությամբ ամենևին չպարապել, ուստի և շատերը հուսահատված, ձգում են երկրագործությունը և գիմում դրսի աշխատանքին, այլապես նրանց սպառնում է սով»[7] (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։ Հաղպատի գյուղացիներից շատերը աշխատում էին 7—8 կմ. հեռավորության վրա գտնվող Ալավերդու հանքերում և գործարանում, ինչպես նաև երկաթուղու վրա, իբրև սեզոնային բանվորներ։ Զարգացող կապիտալիստական հարաբերությունները պատռում էին գյուղական, երբեմնի մշտնջենական թվացող նահապետական հարաբերությունների քողը, մտնում Անդրկովկաս, մտնում Լոռի, բնավեր դարձնում իր և իր պապերի ծննդավայրերին կպած գյուղացուն, ունեզրկում նրան ու շպրտում նոր կյանքի հորձանուտը։ Անդրկովկասում, կապիտալիզմի բուռն զարգացման վաղ շրջանում, տեղի էր ունենում բանվորական գնդերի ձևավորումը ի հաշիվ գյուղական չքավորության։ 1903 թվականին Վ. Ի. Լենինը, վերլուծելով գյուղական պրոլետարների ու կիսապրոլետարների թշվառությունը, գրում էր. «Ո՞վ է աշխատում երկաթուղիների կառուցման վրա, ո՞ւմ են պլոկում կապալառուները, ո՞վ է գնում փայտ կտրելու... ո՞վ է բատրակություն անում, ո՞վ է օրամշակություն անում, ո՞վ է սև աշխատանք կատարում քաղաքներում ու նավահանգիստներում։ Դրանք բոլորը գյուղական չքավորությունն է... Դրանք բոլորը գյուղական պրոլե-

[5] Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 31։
[6] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 130—131։
[7] «Կայծ», 1906, № 17։

տարներն ու կիսապրոլետարներն են... Դրանք միմիայն անունով են գյուղացիներ, իսկ իրականում վարձվորներ են, բանվորներ»[8] *(ընդգծումն իմն է—Հ. Մ.)։*

*Եվ ահա Հաղպատի հողազուրկ ու սակավահող չքավորությունը, «միայն անունով» այդ գյուղացիները, պրոլետարական կեցության նոր պայմաններում, շփվում են հասունացող բանվորական շարժման հետ, տեղյակ լինում ամենահեղափոխական դասակարգի պայքարի ձևերին, մեթոդներին ու նրա նպատակներին, մտնում այդ շարժման մեջ և վերադառնալով գյուղ ոտքի հանում համագյուղացիներին ընդդեմ վայրենի կամայականության բոլոր դրսևորումների։ Անդրկովկասի և մասնավորապես Լոռու հեղափոխական շարժմանը մոտ կանգնած բանվոր-հեղափոխական Ասատուր Կախոյանը, Հաղպատի գյուղացիության մասին գրում էր. «Հաղպատը, անկարող լինելով իր վրա դրված ծանր հարկերը վճարել, իր զավակներից շատերին ուղարկում է քաղաքի գործարաններում, երկաթուղու գծի վրա և հանքերի մեջ աշխատելու։ Եվ ահա այդտեղ, դասակարգային պայքարի դարբնոցում նրանք յուրացնում են դասակարգային կռվի գիտակցությունը ու վերադառնալով գյուղ, սկսում են կազմակերպել իրանց գյուղացիներին»[9] *(ընդգծումն իմն է—Հ. Մ.)։*

Հետաքրքիր է, որ անդրկովկասյան խոշորագույն արդյունաբերական կենտրոններից, հաճախ, բանվորական հեղափոխական ելույթները ճնշելուց հետո, ցարական իշխանությունները շարժմանը մասնակից ոչ տեղացի բանվորներին աքսորում էին իրենց ծննդավայրերը։ Նրանց թվում կային շատ լոռեցիներ, մասնավորապես հաղպատցիներ։

Ալավերդում, Շամլուղում, Ախթալայում, երկաթուղում աշխատող հաղպատցի բանվոր-գյուղացիները ծանր աշխատանքից հետո, շատերը հենց նույն օրը՝ երեկոյան, վերադառնում էին գյուղ, համագյուղացիներին պատմում իրենց և մյուս բանվորների «գլխից անցած-դարձած բաները», խոսում քաղաքի լուրերից, ազատության համար մարտնչող հերոսներից, պատմում «գազետից-բանից» ու աշխատավոր գյուղացիների մեջ բորբոքում հեղափոխական պայքարի բոցը, նրանց տարերային բողոքը, կամա թե ակամա ուղղում լենինյան «Իսկրա»-ի նշած ուղին։ Օր-օրի գյուղական չքավորության հեղափոխական-դեմոկրատական գիտակցությունը, աստիճանաբար, կազմակերպվում էր իբրև սոցիալ-դեմոկրատական գիտակցություն։ Նրանց մոտ սեփական փորձով ամրապնդվում էր լենինյան այն միտքը, որ գյուղացիները իրենց ցանկացած հասարակարգին կհասնեն միայն մարտնչող պրոլետարիատի հետ ամուր դաշնակցած։ Ուժեղանում էր պայքարի ձգտումը, ամրապնդվում հավատը դեպի վեհ նպատակը։

Հաղպատում 1903 թվականի ամռանը լենինյան-իսկրայական կազմակերպության ստեղծմանը նպաստող երրորդ գործոնը, թերևս, պետք է համարել այն, որ կոնսպիրատիվ հեղափոխական աշխատանքի համար Հաղպատի աշխարհագրական դիրքը վերին աստիճանի նպաստավոր էր։ Դրանով էլ առաջին հերթին պետք է բացատրել այն, երբեմն «տարօրինակ» թվացող, հանգամանքը, որ Հայաստանում առաջին պարտիական կազմակերպությունը ստեղծվել է Հաղպատում և ոչ թե, ասենք, խոշոր արդյունաբերական կենտրոն-

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 489—490։

9 Ա. Կախոյան, Հոդվածներ և հուշեր, էջ 57։

Ալավերդում, ուր դաժան շահագործման ենթարկվող բանվորական մի-ջավայրում սոցիալ-դեմոկրատիայի գործունեությունը պարարտ հող կարող էր գտնել։ «Առանձնահատուկ գիրք ու պայմաններ ունեցող Ալավերդում,— գրում էր Կախոյանը։—Նոր եկած օտար մարդը իսկույն նկատվում էր, նրան հետևում էր ադմինիստրացիան, և հերիք էր, որ նա մի որևէ կազմակերպչա-կան փորձ աներ, իսկույն ևեթ ձերբակալվում էր։

Բայց ընդհակառակը, Հաղպատը իր լեռնաշղթայով և դժվար անցքերով միանգամայն նպաստավոր էր գաղտնի ժողովների համար։ Թեև այդտեղ էլ կային հին կարգերի ստրուկներ, որոնք աշխատում էին իրենց մատնություն-ներով խանգարել գործին, բայց նրանք անկարող էին հեղափոխական ոգին մեռցնել այդ ժողովրդի մեջ»[10]։

Այն փաստը, որ Հաղպատի գյուղական պարտիական կազմակերպու-թյունը առաջինն է Հայաստանում, բնավ էլ չպետք է դիտվի ինչ-որ շեղում հանրահայտ մարքսիստական սկզբունքից։ Հայաստանի արդյունաբերական կենտրոններում, արդեն այդ շրջանում, նախապատրաստվում էր պարտիական կազմակերպությունների ստեղծումը։ Վերը նշված պատճառները նկատի առ-նելով հանդերձ, ցանկանում ենք նաև նշել, որ Հաղպատի կազմակերպու-թյունը ստեղծվում էր ամբողջ Լոռում հեղափոխական աշխատանքի կազմա-կերպման համար։ Ուշագրավ է Կախոյանի այն դիտողությունը, որ Հաղպատի ապագա կազմակերպության հիմնադիրներն ու ակտիվ գործիչները «փորձ ե-անում կազմակերպել նաև Ալավերդու հանքագործ բանվորներին»։ Այդ բան-բանվորական տարերային ելույթների շրջանում համեմատաբար պակաս շա-փով տարվում էր տեղում՝ Ալավերդու հանքերում ու գործարանում, իսկ հիմ-նականում Ալավերդու գոտու պարտիական-հեղափոխական աշխատանքը կազմակերպվում էր Հաղպատում։ «Գաղտնի ժողովները տեղի էին ունենում Հաղպատի բարձրավանդակում։ Այդտեղ էին հավաքվում Ալավերդու հանքա-գործ բանվորներից կազմված փոքրիկ խմբակները և երկաթուղու գծի վրա աշխատող բանվորների բջիջը՝ «ռեմոնտը» (այդպես էին անվանում գյուղացի-ները երկաթուղու գծի վրա աշխատող բանվորներին»[11])։

1903 թվականի մարտին Թիֆլիսում լենինյան-իսկրայական կազմակեր-պությունների անդրկովկասյան միասնական կազմակերպության՝ ՌՍԴԲՊ կովկասյան միության ստեղծումը հսկայական խթան հանդիսացավ ամբողջ երկրամասում մարքսիզմի տարածման, բանվորական ու գյուղացիական հե-ղափոխական շարժումների ծավալման գործում։ Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի և այլ արդյունաբերական կենտրոնների 1900—1902 թվականների փայլուն ելույթներին հաջորդեց 1903 թվականի քաղաքական գործադուլների հզոր ալիքը և նրան ուղեկցող հակացարական, դեմոկրատական շարժումը։ Անդրկովկասը թևակոխում էր հեղափոխական շարժման մասսայական ելույթների ժամանակաշրջանը։ Լենինյան «Իսկրա»-ն գրում էր, որ «Հարավի բանվորնե-րի վիթխարի ապստամբությունը այնպիսի իրադարձություն է, որ հսկայա-կան նշանակություն կունենա նոր ապատագրական ամբողջ շարժման համար»[12]։

---

10 Ա. Կախոյան, հոդվածներ և հուշեր, էջ 57։

11 Նույն տեղում, էջ 57—58։

12 Մեջ է բերվում ըստ «Լենինյան «Իսկրա»-ն Անդրկովկասի մասին» ժողովածուի, Հայ-պետհրատ, 1960, էջ 127։

Հեղափոխական պայքարի բարերար մթնոլորտում լոռում նույնպես ծայր առավ աշխատավորների, դեռևս թույլ, դեռևս տարերային, բայց հաստատուն քայլերով առաջ ընթացող, օր-օրի վրա առնականացող հեղափոխական շարժումը։

Բացահայտ պայքարը, ինչպես և պետք էր սպասել, սկսվեց Հաղպատից։ Ալավերդու և երկաթուղու բանվորների մասնակի տնտեսական գործադուլներին զուգընթաց, 1903 թվականի մայիսին պոռթկաց Հաղպատի գյուղացիների գայրույթի առաջին ալիքը։

Գյուղացիների մայիսյան ելույթը Հաղպատի լենինյան-իսկրայական կազմակերպության ստեղծման խթան, անմիջական առիթը հանդիսացավ[13]։

Մենք ցանկանում ենք մայիսյան գյուղացիական ելույթի մասին մի փոքր ավելի հանգամանորեն խոսել, նկատի ունենալով այն, որ երբ խոսք է լինում Հաղպատի 1903 թվականի գյուղացիական շարժման մասին, ուսումնասիրողները, չգիտես ինչու, շարունակում են միայն ու միայն նկատել 1903 թվականի նոյեմբերյան նշանավոր ելույթը։ Մինչդեռ, ինչպես «Պրոլետարիատի կռվի» թերթիկի» (1904 թ. № 5—6) «Նամակ Հաղպատից» թղթակցությունում, այնպես էլ Հաղպատի 1903 թվականի գյուղացիական շարժման վերաբերյալ հիշողություններում[14], հաստատ վկայություններ կան մայիսյան ելույթի վերաբերյալ։ Զայրացած կալվածատիրոջ կամայականություններից, ստեղծված անտանելի դրությունից դուրս գալու այլ ելք չտեսնելով, Հաղպատի գյուղացիները 1903 թվականի գարնանը բռնագրավում են կալվածատիրական «Խաչի դուռ» (այժմ Մաղկասար) կոչված հանդամասը և բացահայտորեն հրաժարվում են նրա դիմաց որևէ հատուցումից։ Դրա հետ մեկտեղ գյուղացիները հրաժարվեցին կատարելու կալվածատիրոջ կամքը՝ վճարելու 1903 թվականին վարձակալված հողերի դիմաց տրվելիք կապալավարձը, ինչպես նաև հրաժարվեցին իշխան Բարաթովին երկրորդ անգամ տալ 1902 թվականից մնացած «պարտքը», որը խարդախ կալվածատերն ու նրա կալվածքների կառավարիչը հորինել ու փաթաթել էին գյուղացիների վզին։ Գազազած կալվածատերը, ապավինելով ցարական բռնապետությանը, ոտքի հանեց իր ստրաժնիկներին ու անտառապահներին, որոնք ուժով հավաքելով գյուղացիներին պատկանող անասունները, փորձեցին հատուցել կալվածատիրական «վնասները»։ Հեշտ չէր, սակայն, իրագործել այդ ամենը։ Փոխվել էին ժամանակները։ Գյուղի՝ ոտքի կանգնած դրեթե բոլոր բնակիչները, որոնք հասցրել էին դինվել ինչով որ հնարավոր էր, խլեցին անասունները և գյուղից դուրս վռնդեցին ստրաժնիկներին ու անտառապահներին։ Ահա ստրաժնիկներին է մոտենում գյուղից դուրս, ճանապարհի երկու կողմերում դարանակալած դինված գյուղացիներից մեկը՝ Եգոր Մաթոսյանը։ «Գալիս է Եգորը հրացանով,— հիշում է Ս. Էվոյանը,— և ասում... Դուք եկել եք մեր ապրուստը, մեր կարողությունը անտեղի տանում եք. մենք էլ անասուն չենք, որ թողնենք մեր գոմերը դատարկեք ու տանեք. ի՞նչ է, դուք ուզում եք այս գյուղում արյունի գյոլեր կապել... Մենք քանի սաղ ենք, ձեզ ապրանք չենք տա, թե զոռով տա-

13 Ոմանք Հաղպատի կազմակերպության հիմնադրումը տանում են 1902 թ.։ Այդ բանի համար ոչ մի հիմք չկա (տե՛ս Երևանի Պետական համալսարանի հրատարակած «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» ժողովածուն, Երևան, էջ 218)։

14 Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. գ. 5, 6 (Ս. Էվոյանի, Ս. Իսրայելյանի, Ե. Մաթոսյանի և մյուսների հիշողությունները)։

նեք, ձեզանից մի քանի մարդի դիակ կմնա, իսկ մեր ապրանքը մենք չենք թողնի տանեք»[15]։ Համոզվելով, որ իրենց ճանապարհը փակ է և որ զինված գյուղացիները լի են վճռականությամբ՝ թույլ չտալ թալանելու իրենց ունեցվածքը, ահաբեկված ստրաժնիկներն ու անտառապահները, կես ճանապարհին, թողնում են անասունները զինված գյուղացիների տնօրինությանը և հեռանում գյուղից։ Արձագանքելով այդ դեպքերին, ՌՍԴԲՊ կովկասյան միության օրգան «Պրոլետարիատի կռվի» թերթիկը» գրում էր. «Գյուղացիները, նույնիսկ կանայք ու երեխաները, զինվելով ինչով որ պատահում էր, դուրս քշեցին գյուղից գիշատիչ ստրաժնիկներին։ Կառավարությունը (պետք է հասկանալ Բորչալուի գավառական իշխանությունները—Հ. Մ.) գլուխը կորցրել էր։ Մինչև այն ժամանակ, խաղաղ շինականները, որոնք համբերությամբ տանում էին ցարի լուծը և կալվածատիրոջ արյունահեղությունները, կատաղել էին»[16]։ Հասկանալի է, իհարկե, որ այդ ելույթի ժամանակ արյուն չթափվեց սոսկ այն պատճառով, որ գյուղացիության թշնամի ուժերը, չսպասելով նման վճռական դիմադրություն, այդ շրջանում թույլ գտնվեցին։ Ուժերի այլ հարաբերության դեպքում չէր կարող չհոսել աշխատավոր գյուղացիների արյունը։ Այս առիթով կարևոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ցարական իշխանություններին «ձեռնտու չէր» ամեն մի առիթով զենքով միջամտել գյուղացիների ու կալվածատերերի միջև եղած բախումներին։ Այդ բանը ուժեղացնում էր հակացարական շարժումը, ժողովրդի աչքում բյուրեղացնում, պարզ էր դարձնում ցարական դիկտատուրայի դասակարգային բովանդակությունը։ Ուստի տեղական գավառական իշխանությունը, մայիսին, դեռևս ծայրահեղորեն անհրաժեշտ չէր գտնում միջամտելու Հաղպատի դեպքերին։

Համոզվելով, որ մայիսյան ելույթը չի մոռացվի Բարաթովի ու ցարական իշխանությունների կողմից, գյուղացիները որոշում են կազմակերպվել, որպեսզի առավել միասնությամբ ու վճռականորեն հանդես գան ընդդեմ դիկտատորական բռնության։ Պետք է նշել, որ անդրկովկասյան հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, մասնավորապես Թիֆլիսի կազմակերպությունը, երկրամասում ծավալելով հեղափոխական պրոպագանդա և ագիտացիա, հասցրել էր նաև Հաղպատը ներգրավել ընդլայնվող աշխատանքների մեջ։ Այս բնագավառում հատկապես նշանակալից է 1898 թվականից ՌՍԴԲՊ-ի անդամ, բանվոր-հեղափոխական Ասատուր Կախոյանի (Բանվոր Խեչո)[17] դերը, որը 17 տարեկանից թողնելով հայրենի Հաղպատը, 1891 թվականին «ուսում առնելու» է գնում «կապիտալի քուրայում եռացող» Թիֆլիս, Բաթում... Սակայն, Թիֆլիսում նա չի գտնում իր երազած դպրոցը։ Նրա համար դպրոց է դառնում կյանքը, իր դառնություններով, իր անսահման հարուստ բովանդակությամբ։

Մի շարք առաջավոր բանվորների հետ մեկտեղ նա, 1898 թվականին, հիմնադրում է հայ բանվորների առաջին մարքսիստական խմբակը և եռանդուն մասնակցություն ունենում Թիֆլիսի նշանավոր բանվորական ցույցե-

15 Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Ֆիլիալի արխիվ ֆ. 40, գ. 6, թ. 25։

16 «Պրոլետարիատի կռվի» թերթիկ», 1904, № 5—6։

17 ՌՍԴԲՊ 5-րդ համագումարին մասնակցելու համար Բորչալուի կազմակերպության կողմից պատգամավոր ընտրվելու կապակցությամբ, Կախոյանը հայտնի է նաև «Բորչալինսկի» գարտիական կեղծանունով։

ին։ 1902—1903 թվականներին Կախոյանը Բաթումում է։ Նշանավոր հեղափոխական Մարտիրոս Միրաքյանի (Շանթ) հետ մեկտեղ նա աշխատում ու գործում էր Մանթաշևի գործարաններում և ակտիվորեն մասնակցում Բաթումի բանվորական շարժմանը։ Այդ տարիներին Կախոյանը մշտական կապ է պահպանում Հաղպատի հետ, այնտեղ ուղարկում, կամ իր հետ բերում մատչելի մարքսիստական գրականություն։ Գյուղացիները, ինչպես արդեն նշվել է, իրենց հերթին բազմաթիվ թելերով կապված էին արդյունաբերական շրջանների հետ, վկա էին պրոլետարական հասունացող պայքարին։

Մայիսյան ելույթին նախորդող ժամանակաշրջանում, հատկապես ՌՍԴԲՊ կովկասյան միության ստեղծումից հետո, Հաղպատի կազմակերպության հնագույն անդամ Մարտիրոս Թանդիլյանի բնակարանը դառնում է այն կոնսպիրատիվ օջախը, որտեղ սկսում է առաջ գալ ու ձևավորվել Հաղպատի լենինյան-իսկրայական կազմակերպությունը։ Հեղափոխական աշխատանքը լոռու բանվորների և գյուղացիների շրջանում կազմակերպելու նպատակով ՌՍԴԲՊ կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեի հանձնարարությամբ Մ. Թանդիլյանը իր բնակարանին կից բաց է անում մի կրպակ, որտեղ, զանազան տեսակի ապրանքների վաճառքի պատրվակով, զրույց էր ունենում առանձին գյուղացիների հետ, նրանց ծանոթացնում ՌՍԴԲՊ կովկասյան միության հայերեն և այլ լեզուներով հրատարակված կոչերի և սոցիալ-դեմոկրատական մատչելի գրականության, այդ թվում նաև լենինյան «Իսկրա»-ից թարգմանված նյութերի հետ։ Տան ներքնահարկը, որի վրա տեղավորված էր խարխուլ, ոչ մի կասկած չներշնչող «բաղնիքը», ծառայում էր իբրև գաղտնի հավաքատեղի։ Ճրագի լույսի տակ այնտեղ տեղի էին ունենում զրույցներ, ժողովներ... Այդպես, քայլ առ քայլ, նախապատրաստվում էր կազմակերպության ստեղծումը։ Տեղացի գյուղացիներից ոմանց հիշողության մեջ ամուր է տպավորվել Թանդիլյանի կուլտուրական-լուսավորական գործունեությունը, այն, որ Թանդիլյանը Հաղպատում առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ դեպի սոցիալ-դեմոկրատիան հակված գյուղացիների անգրագիտության վերացման գործին, այդ բանը օգտագործելով իբրև միջոց սոցիալիզմը գյուղական պրոլետարներին ու կիսապրոլետարներին հասցնելու համար, աշխատավոր գյուղացիության դասակարգային գիտակցությունը կազմակերպելու, նրան մարտնչող պրոլետարիատի շուրջը համախմբելու համար[18]։

Գարնան գյուղացիական ելույթից անմիջապես հետո, մայիսի վերջերին, ինչպես վկայում է Կախոյանը, Հաղպատի գյուղացիները Թիֆլիս են ուղարկում «մի պատգամավորություն Մարտիրոս Թանդիլյանից, Սիմոն Իսրայելյանից և Արզուման Սոխակյանից կազմված, խնդրում են կոմիտեին, որ իրենց մոտ պրոպագանդիստ ուղարկեն։ Թիֆլիսի կազմակերպությունը հանձնարարում է ինձ, որպես հաղպատցու և անմոռանալի վաստակավոր հեղափոխա-

---

18 Մ. Թանդիլյանը 1909 թ. ձերբակալվում և 6 այլ հաղպատցիների հետ աքսորվում է Սիբիր։ Նրանց մեջ էին կազմակերպության հիմնադիր կազմի անդամ Սայադ Շամբարյանը և անպարտիական Վարդան Թանդիլյանը։ Վերջինս մեղադրվում էր Նոյեմբերյան ելույթի ազդանշանի՝ եկեղեցու զանգերը տալու և ամբողջ դյուզը ոտքի հանելու համար։ Մ. Թանդիլյանը դաշնակցականների ձեռքով սպանվում է 1917 թ., երբ նա Կախոյանի հետ միասին պարտիական հանձնարարությամբ գնում է Որնակ։

կան «դյադուշկա» Մելիքին գնալ Հաղպատ։ Մենք առաջնորդող պատգամավորներին հայտնում ենք, որ ժողովին պիտի հրավիրել այնպիսի տարրերի, որոնք իրենց դրությունով համապատասխանեն մեր կուսակցության ծրագրի առաջադրած կետերին (Ծրագիրը հայտնի էր «Իսկրա»-ից, որը արտատպվում էր նաև Անդրկովկասում—Հ. Մ.)։ Նրանք մեզ պատասխանում են, որ իրանք արդեն կազմակերպված են»[19]։

Հունիսի կեսերին տեղի է ունենում Հաղպատի լենինյան-իսկրայական կազմակերպության հիմնադիր ժողովը։ Հետաքրքիր է, որ այդ ժողովին ներկա էին նաև կանայք, որոնք «եկել էին լսելու եկող ազատության «գրիցը»»։

Կազմակերպության հիմնադիրներից մեկը՝ Սիմոն Իսրայելյանը իր հիշողություններում գրում է, որ Հաղպատում «կոմբջիջը կազմակերպվել է այդ ընդհարումից (նկատի ունի 1903 թվականի Հաղպատի գյուղացիության նոյեմբերյան ելույթը—Հ. Մ.) առաջ, 1903 թվականի հունիս ամսին»[20]։

Ա. Կախոյանի հետ մեկտեղ Հաղպատի կազմակերպության հիմնադիրն է նաև պարտիայի հնագույն անդամ, անդրկովկասյան հեղափոխական շարժման ակտիվ գործիչ, լենինյան դաղափարների փայլուն պրոպագանդիստ Մելիք Մելիքյանը, որը աշխատավորական լայն զանգվածների շրջանում հայտնի էր իրրև մտերիմ խորհրդատու, «Դեդուշկա» անունով։

Հարկ ենք համարում նշել, որ անհատի պաշտամունքի տարիներին, կամա թե ակամա, նվազեցվել է Ա. Կախոյանի գործունեությունը, իսկ հաճախ նաև ամբողջությամբ մոռացության տրվել։ 1937 թվականին Ա. Կախոյանը նույնպես ենթարկվում է հալածանքի, ձերբակալվում և 1939 թվականին մեռնում բանտում։ Քաջատեղյակ լինելով անդրկովկասյան հեղափոխական պայքարին, պարտիական կազմակերպությունների գործունեության անցուդարձին, Ա. Կախոյանը նույնպես չէր կարող հանդուրժել ավանտյուրիստ Բերիայի կեղծիքով ու աղավաղումներով լի դրությունը և շատ ազնիվ բոլշևիկների նման չէր թաքցնում իր վերաբերմունքը դեպի այն։ Նա էլ շատերի նման կռահում ու չէր թաքցնում Բերիայի ավանտյուրիզմն ու լենինիզմին խորթ լինելը և այդ մասին գրում էր Համկ(բ)Պ Կենտկոմ՝ իրեն անձամբ ծանոթ Ստալինին։ Այդ ամենի համար Ա. Կախոյանը հատուցեց իր կյանքով[21]։ Մեր պատմական գրականության մեջ նրա մասին մի քանի տարի է ինչ խոսվում է։ Ժամանակն է, որպեսզի այլևս չնվազեցվի նրա գործունեությունը, պրոֆեսիոնալ հեղափոխական գործիչի գործունեությունը, որովհետև այդ նվազեցումից ոչ միայն տուժում է ինքը Ա. Կախոյանը, այլ, որ պակաս կարևոր չէ, տուժում է պատմական իրադարձությունների, դեպքերի օբյեկտիվ գնահատումը։ Այժմ բոլոր պայմանները ստեղծված են, որպեսզի վերանայվեն ու ճշտվեն անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների, պարտիական գործիչների առանձին փաստերն ու գնահատականները, որոնք արհեստականորեն խեղաթյուրվում էին ոչ հեռավոր անցյալում։

Հաղպատի կազմակերպության հիմնադիր կազմում էին Մարտիրոս Թան-

---

19 Ա. Կ ա խ ո յ ա ն, Հոդվածներ և հուշեր, էջ 58։

20 ՄԼԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. 5, թ. 61։

21 Կախոյանին ձերբակալելուց հետո, 1937 թ. Մոսկվայում ձերբակալվում է նաև նրա ուսանող որդի Կ. Կախոյանը, որը բանտից ազատվեց միայն 1947 թ.

դիլյանը, Սիմոն Խուրաելյանը, Սայադ Շամբարյանը, Արգուման Սոխակյանը, Եգոր Մաթոսյանը և ուրիշներ[22]։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին կազմակերպության մեջ ակտիվորեն աշխատում էին նաև Ալավերդու և Երկաթուղու հետ սերտորեն կապված բանվորներ Ս. Փիրուզյանը, Օ. Մարուքյանը, Պ. Թանդիլյանը, Շ. Բեժանյանը[23], Ա. Հ. և Մ. Շամբարյանները, Ա. և Շ. Պարանյանները, Մ. Կալեկչյանը, Ալ. Ալիխանյանը և ուրիշներ[24]։ Հեղափոխության տարիներին հատկապես նշանակալից է Սիմոն Էվոյանի ղեկավար գործունեությունը Հաղպատի և Լոռու բոլշևիկյան կազմակերպությունում։ Նա Կախոյանի հետ մեկտեղ հանդիսանում էր Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության կողմից Լոռուն ամրացված պրոպագանդիստ-կազմակերպիչ։

Մի քանի խոսք կազմակերպության հիմնադրման օվա մասին։ 1923 թվականի հունիսին Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ռեսպուբլիկայում նշվում է Հաղպատի կազմակերպության հիմնադրման 20-ամյա հոբելյանը։ Տոնակատարության օրը նշանակվում է հունիսի 2-րդ կիրակին՝ ամսի 10-ը։ Հաղպատում տոնակատարությունը վեր է ածվում իսկական ժողովրդական տոնի, որին մասնակցում էին Ա. Մռավյանը, Ա. Կախոյանը, Հայկ Հովսեփյանը և այլ պարտիական ու պետական գործիչներ։ ՀԿՊ Կենտկոմը այդ նշանավոր օրվա առթիվ «Լոռվա հեղափոխության 20-ամյա արթուն պահակ», «Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության անդրանիկ զավակ—Հաղպատի կոմբջիջին» է նվիրում Կարմիր դրոշ։ Ամսի 9-ին «Խորհրդային Հայաստան» թերթում լույս է տեսնում Ա. Մռավյանի «Հաղպատի կոմբջիջը» վերնագրով հոդվածը, որտեղ նա գրում էր, որ «Հաղպատի կոմբջիջը Հայաստանի կոմունիստական կուսակցության ամենահին բջիջն է։ Նրա անունը ոսկե տառերով է գրված Հայաստանի բանվորա-գյուղացիական պատմության գրքում» (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։

Մենք կարծում ենք, որ հունիսի 10-ը սոսկ 20-ամյա հոբելյանի տոնակատարության պայմանական, հարմար օրն է և ոչ թե հիմնադրման հաստատուն օրը, մի բան, որը դեռ պետք է պարզել։ Սակայն, անառարկելի է, որ կազմակերպությունը ստեղծվել է հունիսին։

ՌՍԴԲՊ կովկասյան միության կոմիտեն ճանաչում է Հաղպատի կազմակերպությունը և դրանից հետո այն դիտում իբրև իր տեղական բջիջներից-կազմակերպություններից մեկը։ Իբրև նոր կազմակերպություն, Հաղպատի լենինյան-իսկրայական կազմակերպությունը անմիջական ղեկավարություն պետք է ստանար Թիֆլիսի կոմիտեից։

1903 թ. հուլիսին տեղի ունեցավ ՌՍԴԲՊ 2-րդ համագումարը, որը վերջ տվեց սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների անջատվածությանը և ստեղծեց նոր տիպի մարքսիստական պարտիա։ Ընդունելով լենինյան ծրագիր և պարտիայի կանոնադրություն, համագումարը սկիզբ դրեց բոլշևիզմին, որը հենց այդ համագումարում էլ մարքսիզմի թեորիական ամենահաստատուն բազայի վրա ծնվեց որպես քաղաքական մտքի հոսանք և որպես քաղա-

22 Տես՝ ՄԼԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գգ. 5 և 6 (Ս. Էվոյանի, Ս. Խուրայելյանի հիշողությունները)։

23 Ընկ. Շաքար Բեժանյանը այժմ կենդանի է։ ՌՍԴԲՊ 50-ամյակի առթիվ նա պարգևատրվել է Լենինի շքանշանով։

24 Տես՝ Ա. Կ ա խ ո յ ա ն, Հոդվածներ և հուշեր, էջ 61։

քական պարտիա։ Այդ շրջանում, դեռևս փոքրաթիվ, բայց հաստատ քայլերով դեպի նվիրական նպատակը ընթացող բոլշևիկները՝ անջրպետվելով մենշևիկներից՝ իրենց ձևոքը վերցրին իմպերիալիզմի պայմաններում հասունացող բուրժուա-դեմոկրատական հեղափոխության դրոշը։ Ինչպես համագումարի նախապատրաստման ժամանակաշրջանում, այնպես էլ նրանից հետո լենինյան պարտիայի ստեղծման ճանապարհին մեծ դեր խաղաց ՌՍԴԲՊ կովկասյան միությունը, որը իր տեղական կազմակերպությունների հետ մեկտեղ անվերապահորեն կանգնեց բոլշևիկյան դիրքերում, Անդրկովկասի յուրահատուկ, դժվարին պայմաններում կյանքի կոչելով լենինյան գաղափարները։

Հաղպատի բոլշևիկյան կազմակերպությունը 1903 թվականի ամռան և աշնան ամիսներին, համադեմոկրատական, մասսայական քաղաքական պայքարի բարերար մթնոլորտում ամրապնդվում է գաղափարապես և կազմակերպչորեն։ Այդ բանին՝ ինչպես նաև գյուղացիների հեղափոխական տրամադրությունների հետագա հասունացմանը հսկայական չափով նպաստեց հատկապես հակացարական դեմոկրատական այն շարժումը, որը լայնորեն ընդգրկել էր Անդրկովկասի հայկական (և ոչ միայն հայկական) շրջանները։ Ստ. Շահումյանը գրում էր, որ «Քաղաքական կյանքի համար արթնացող հայ պրովինցիան տեղ-տեղ զենքը ձևոքին դուրս եկավ իր նկատմամբ բռնացողների դեմ»[25]։ Իսկ լենինյան «Իսկրա»-ում Բ. Կնունյանցը գրում էր. «Մեզ մոտ կատարվում են մինչև այժմ տեղի չունեցած երևույթներ։ Ամենախուլ տեղերից լուրեր են գալիս կառավարության հետ պինված ընդհարումների, մասսայական ցույցերի, միտինգների և այլնի մասին... Անդրկովկասը բորբոքված է հեղափոխական փորձիկով»[26] (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։

Ժողովրդական՝ հակացարական հեղափոխական շարժումները լայն ծավալ ստացան նաև Լոռում։ «Իսկրա»-ն նշում էր, որ Լոռում սովորական դարձած ժողովներում ու միտինգներում արտասանվող «բոցաշունչ ճառերը» ծածկվում էին ժողովրդի համերաշխ բացականչություններով՝ «Ավելի շուտ կմեռնենք, քան թե թույլ կտանք մեր իրավունքների ոտնահարումը»[27]։ Լոռու Մարց, Ջալալօղլի, Դսեղ, Հաղպատ, Սանահին, Կուրթան, Վարդաբլուր, Աքորի՝ Լեջան, Ուռուտ, Ուզունլար, Գյուլագարակ, Հորարցի, Ղաչաղան, Մղարի, Որնակ և այլ գյուղերում այդ շարժումները առավել սուր բնույթ ստացան։ Մարց գյուղի մոտակա անտառում հավաքվել էին 600 հոգուց ավելի գյուղացիներ, որոնք մտադիր էին զինված դիմադրություն ցույց տալ օրենքը Լոռում իրագործող կառավարական հանձնաժողովին։ Փաստերը վկայում են, որ այդ շրջանում Լոռում ակտիվորեն գործում էին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գաղափարները աշխատավորների մեջ տարածող ագիտատորները։ Այսպես. «Իսկրա»-ն գրում էր, որ «Ջալալօղլում ցանկացել են ձերբակալել ագիտատորին, բայց ժողովուրդը ուժով ետ է խլել նրան և նա ազատ ուղեվորվել է հարևան գյուղերը շարունակելու իր աշխատանքը»[28]։

Ամռան և աշնան այս «հեղափոխական փոթորիկը» ազգային, հակացարական շարժմանը զուգընթաց առաջ բերեց նաև դասակարգային սուր պայքար։

---

25 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 221։
26 «Իսկրա», № 49, 1 հոկտեմբերի, 1903 թ.։
27 «Իսկրա», № 50, 15 հոկտեմբերի, 1903 թ.։
28 Նույն տեղում։

Հաղպատի բոլշևիկյան կազմակերպության լուրջ քննությունը հանդիսացավ 1903 թվականի նոյեմբերյան գյուղացիական զինված ապստամբությունը. 20-րդ դարի սկզբին Հայաստանի հեղափոխական շարժման պատմության այդ լուսավոր էջերից մեկը։ Այդ ելույթի ժամանակ ապստամբ գյուղացիները դրսևորեցին կալվածատերերի ու ցարիզմի դեմ պայքարի իրենց վճռական կամքը։ Ժամանակակիցները վկայում են, որ գյուղացիական այդ նշանավոր ելույթը տեղի է ունեցել բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ[29]։ Հաղպատի գյուղացիության մայիսյան ելույթից հետո Բարաթովը հասել էր այն բանին, որպեսզի Թիֆլիսի օկրուգային դատարանն ընդուներ վճիռ լիովին բավարարելու կալվածատիրոջ պահանջները, խստորեն պատժելու անհնազանդ, «բունտար» գյուղացիներին։ Լոռում նույնպես դաժանորեն խեղդելով հակացարական ժողովրդական մասսայական շարժումը, Բորչալուի գավառական իշխանությունները ձեռնամուխ են լինում կալվածատիրոջ շահերի հավատարիմ պաշտպանության իրենց միսիայի իրագործմանը։ Հաղպատ են ուղարկվում ոստիկանական ուժեր, որոնք բռնագրավում են գյուղացիների անասունները, գույքը։ Սրբ գյուղացիների համար փաստ դարձավ, որ իրենք զրկվում են ապրուստի առանց այն էլ խղճուկ միջոցներից, երբ նրանց աչքերի առաջ ծառացավ իրենց գալիք ամբողջ ողբերգությունը, նրանք մի մարդու պես ոտքի կանգնեցին պաշտպանելու իրենց շահերը։ Գյուղացիները վճռեցին, և վճռեցին միանգամայն ճիշտ, որ ավելի լավ է մեռնել ճնշողների դեմ կռվելով, քան սովամահ լինել առանց կռվի։ Սրանք վինված հերոսական դիմադրություն ցույց տվեցին ցարական օպրիշնիկներին։ Ուժերը, սակայն, անհավասար էին։ Հայաստանի և Անդրկովկասի գյուղացիական հեղափոխական շարժման այդ հերոսական զինված ելույթը, որին նույնպես հատուկ էին դարասկզբի գյուղացիական շարժման հիմնական բացերը, դաժանորեն խեղդվեց ցարիզմի կողմից։ Ցարական ոստիկանները սպանեցին 5 գյուղացիների։ Նրանց թվում էր նաև մի հղի կին։ Շատերը ծանր վիրավորվեցին։ Ցարիզմի ու գավառական իշխանությունների համար վերին աստիճանի բնորոշ է Բորչալուի գավառապետի «մասնավոր նամակը»[30] Թիֆլիսի նահանգապետին. «Թախանձագին խնդրում եմ Ձեզ՝ թույլատրելու ինձ հաղպատցիների նկատմամբ կազակներով, համաձայն օրենսդրության, գործել էկզեկուցիոն կարգով։ Ժամանակը հիմա այնպիսին է, որ անհրաժեշտ է այնպիսի վայրենիների, ինչպիսիք հաղպատցիներն են, որոշ չափով պատժել, որը և օրինակ կծառայի հայկական մյուս գյուղերի համար» (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։ Նույն գավառապետը, ինչպես և պետք էր սպասել, արդարացնելով ոստիկանական պրիստավ Ավալովի գործողությունները Հաղպատում, գրում էր, որ «Ավալովի գործողությունները միանգամայն ճիշտ են, այլ կերպ նա չէր կարող վարվել. պահակախմբի և նրա վրա նետում էին քարեր, հարձակվում էին մահակներով ու քարերով, կրակում էին տներից, էլ ի՞նչ էր մնում անել»։

Պատժիչ արշավախմբի վայրենի գործողությունների հետևանքով ձերբակալվեցին շուրջ 200 գյուղացիներ[31], որոնցից 18-ը նետվեցին Մետեխի բան-

29 Տես՝ Ա. Կ ա խ ո յ ա ն, Հոդվածներ և հուշեր, էջ 200։

30 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 34գ., գ. 431, թ. 9—11։

31 Նրանց մեծ մասին ոստիկանները լցրեցին Ցաքոտ կոչված վայրի գոմերը, որտեղ այդ գյուղացիները մի շաբաթից ավելի քաղցած ու ծարավ հատուցեցին իրենց «բունտարության» համար։

տային ամրոցը։ Նրանց մեջ էին Հաղպատի բոլշևիկյան կազմակերպության ամենաակտիվ անդամներից շատերը։ 15 օր[32] անընդհատ, նոյեմբերի 8—22-ը կազակներն ու ոստիկանները թալանի ու բռնությունների վայրենի խրախճանք կազմակերպեցին «Կարմիր Հաղպատում»։

Բոլշևիկյան «Պրոլետարիատի կռվի» թերթիկը», նկարագրելով այդ դեպքերը, գրում էր. «Նոքա (կազակները—Հ. Մ.) 8 խմբի բաժանվեցին և զանազան կողմերից հարձակվեցին գյուղի վրա։ Չի կարելի նկարագրել այն գազանությունները, որոնք տեղի ունեցան այնտեղ։ Կազակները թափվելով տները, կողոպտում էին այն բոլորը, ինչ որ ձեռքի տակ էր ընկնում. ծեծում էին տղամարդկանց ու երեխաներին, իսկ կանանց ու աղջկերանց բռնաբարում։ Կանանց գլխի զարդերը և գյուղացիների հավաքած մի քանի կոպեկները բոլորովին անհետացան։ Բոլոր գյուղը կողոպտելուց հետո արդեն սկսեց տեղի ունենալ սարսափելի էկզեկուցիան... Գյուղացիները ազատվում էին հարևան գյուղերը փախչելով ցարի գազանացած ծառաներից ու զորքից։

Ներկայումս գյուղում էլ մարդ չկա։ Այնտեղ, որտեղ քիչ առաջ եռում էր կյանքը, այժմ դարձել է անապատ։ Ռավառական պրիստավը այս գազանություններից վերջը ման էր գալիս ասելով. «Հաղպատը մենք հավասարեցրինք հողի հետ, այնտեղ այլևս խոտ չի բուսնի»։ «Խաչի դուռը» վերադարձվեց Բարաթովին։ Գյուղացիների անասունները և ունեցվածքի մեծ մասը բռնագրավվեց հօգուտ կալվածատիրոջ։

Վ. Ի. Լենինը 1903 թ. գրում էր. «Գյուղացիները ջարդվեցին, բայց նրանք նորից ու նորից ոտքի կելնեն։ Նրանք հոգեպես չեն ընկճվի առաջին պարտությունից»[33]։ Այդ հավասարապես վերաբերում էր ինչպես Պոլտավայի ու Գուրիայի գյուղացիական շարժումներին, այնպես էլ Հաղպատի 1903 թվականի նոյեմբերյան ելույթին, որը Ռուսաստանում Վ. Ի. Լենինի բնութագրած «առաջին գյուղացիական ապստամբության» նշանավոր փաստերից մեկն էր։

Ապստամբության ճնշման նման պայմաններում Հաղպատի բոլշևիկյան կազմակերպությունը դաժանորեն ջախջախվեց, այն ժամանակավորապես կազմալուծվեց և իրև կազմակերպություն դադարեց գործելուց։ Կազմակերպության անդամները կամ ձերբակալվեցին, կամ էլ անցան խորը ընդհատակ։ Այդպես շարունակվեց մի քանի ամիս, մինչև որ 1904 թվականի մայիսին հնարավոր դարձավ ոտքի կանգնեցնել այն, նոր թարմ ուժեր համախմբել։ Վերին աստիճանի արժեքավոր են Ա. Կախոյանի վկայությունները Հաղպատի կազմակերպության վերականգնման վերաբերյալ։ «Նախքան Թիֆլիս վերադառնալս,— գրում էր Կախոյանը,— ես Բաթումից մի նամակ գրեցի Հաղպատ գյուղի ընկերներից մեկին, թե համբարձման տոնին (մայիսին—Հ. Մ.) կլինեմ «Դրսի վանք» կոչված ուխտատեղում։ Այնտեղ ամեն տարի համբարձման օրը շրջանի գյուղացիները մեծ բազմությամբ ուխտ էին գնում։ Գտա, որ այդ ուխտատեղին կարելի է օգտագործել միտինգի համար և այնտեղ խոսել

---

32 Ա. Կախոյանը նշում է 10 օր, մի բան, որը մերժվում է արխիվային փաստաթղթերով։ Նոյեմբերի 8—10-ը Հաղպատ եկած գավառական ստրաժնիկները մոտ 50 հոգի էին, 10—16-ը Հաղպատում գտնվող կազակների և ոստիկանների թիվը հասավ 150-ի։ Ամսի 16—22-ը նրանց թիվը անցնում էր 100-ից։ Ամսի 22-ից հետո երկար ժամանակով Հաղպատում թողնվեց 5 հոգուց բաղկացած ոստիկանական պահակախումբ։

33 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 540։

գյուղացիների հետ հողային հարցի շուրջը։ Հաղպատի գյուղացիները բավականաչափ կազմակերպված էին։ Նրանք արտահայտվել էին 1903 թվականին, որի հետևանքը եղել էր մի շարք գյուղացիների գնդակահարումը... և մի քանի տասնյակ երիտասարդների ձերբակալությունը... Հարկավոր էր այդ շարժումը ծավալել նաև մյուս գյուղերում։

Վերադառնալով Թիֆլիս և ստանալով բոլշևիկյան կոմիտեի համաձայնություն, ճանապարհ ընկա դեպի ուխտատեղին։ Առավոտյան լույսը դեռ չբացված գնացքը կանգ առավ Մանեսում։ Գնացքից իջա և, առանց կանգ առնելու, երկաթուղու գծով վերադարձա դեպի ուխտատեղի... Բաթումից դրած նամակս ստանալուց հետո Հաղպատի երիտասարդները որոշել էին կազմակերպված ձևով միտինգի փոխել այդ օրվա հավաքույթը։ Կազմակերպության գլուխ անցած Մարտիրոս Թանդիլյանը դեռ լույսը չբացված՝ եկել էր ուխտատեղին, իմանալով, որ ես առավոտյան վաղ լինելու եմ այնտեղ։ Քիչ հետո եկան նրա ընկերները, ապա հետզհետե ուխտավորները բռնեցին ներսի բավական ընդարձակ տարածությունը։ Ուխտավորների թիվը հասնում էր մոտավորապես երկու հարյուրի։

Մարտիրոս Թանդիլյանը ուխտավորներին և շրջակա գյուղերից հավաքված երիտասարդներին հայտարարեց, թե հեղափոխական շարժման մասին խոսակցություն է լինելու։ Մի քանի բոպեից հետո բազմությունն ի մի հավաքվեց, և Մ. Թանդիլյանը բացված համարելով միտինգը, խոսքը տվեց ինձ...

Միտինգից հետո ես և Հաղպատցի երիտասարդները հեռացանք այդտեղից։ Բարձրանալով գյուղ, այնտեղ առանձին ժողով ունեցանք, որտեղ հավաքված ընկերները՝ երկաթուղու տեղական բանվորների գլխավորությամբ, վերակազմեցին կազմալուծված խմբակը... Վերակազմելով Հաղպատում կուսակցական խմբակը և կապելով Թիֆլիսի 3-րդ ռայոնական կոմիտեի հետ, վերադարձա Թիֆլիս»[34] (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։

Այսպիսով, ցարական ոստիկանի հույսը, թե «հողին հավասարեցված Հաղպատում այլևս խոտ չի բուսնի», չիրականացավ։

Ոտքի կանգնելով, նոր ուժեր համախմբելով, դասեր վերցնելով դաժան պայքարի փորձից, Հաղպատի բոլշևիկյան կազմակերպությունը դեպի ռուսական առաջին հեղափոխությունը գնաց իբրև անդրկովկասյան բոլշևիկյան մարտական կազմակերպություններից մեկը։ Հեղափոխության տարիներին Հաղպատը դարձավ անդրկովկասյան բոլշևիկների կարևոր հենակետերից մեկը։ Այնտեղ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Մ. Մելիքյանի և ուրիշների գլխավորությամբ տեղի էին ունենում Լոռու բոլշևիկյան կոնֆերանսները, որոնք հսկայական դեր խաղացին Լոռում և Հայաստանում բանվորների և գյուղացիների պայքարի կազմակերպման գործում։

---

34 Ա. Կ ա խ ո յ ա ն, Հոդվածներ և հուշեր, էջ 198—200։